

Դրամաշնորհային հաշվետվություն N_13_

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում»
Դրամաշնորհի N	ԴՏՊ-1160-11012/Մ4
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ ԱՍՀՆ
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01.01.2022-31.12.2022
Հաշվետու ժամանակահատված	01.10.2022-30.12.2022
Ներկայացման օր	20.12.2022
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Անահիտ Նահապետյան, Ցերեկային կենտրոնի տնօրեն

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում՝ 4-րդ եռամսյակում, իրականացվել են հետևյալ գործողությունները.

- **Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում.** Հաշվետու ժամանակահատվածում ծնողների դիմումների հիման վրա եղել են ընդհանուր թվով երկու նոր շահառուներ, որոնց կարիքներն ու կարողությունները գնահատվել են կենտրոնի թիմի կողմից: Ընդհանուր թվով եղել են նույնքան շահառուների դուրսգրումներ: Առկա է ծառայություններ ստացող 25 շահառուների գնահատված կարիքներն ու կարողությունները:
- **Անհատական զարգացման պլանի մշակում.** Գնահատում անցած բոլոր շահառուների համար մշակվել է անհատական զարգացման պլան, համաձայն որի իրականացվել են անհրաժեշտ աշխատանքներն ու պարապմունքները կենտրոնում:
- **Ծառայությունների, պարապմունքների ու խմբակների նախանշում.** Շահառուների համար հաշվետու ժամանակահատվածում մշակվել է ծառայությունների ու պարապմունքների ժամանակացույց: Շարունակում են գործել դիզայնի և կավագործության խմբակները: Կենտրոնում շարունակվում են մատուցվել անհրաժեշտ ծառայությունները շահառուներին, բոլոր պարապմունքներն ու խմբակների աշխատանքներն իրականացվում են համաձայն ժամանակացույցի:
- **Շահառուների ծնողների հետ պայմանագրերի կնքում.** Կենտրոնում առկա են ծառայություն ստացող 25 շահառուների ծնողների հետ պայմանագրերը անվճար սոցիալական ծառայությունների մատուցման մասին: Նոր շահառուների ծնողների հետ նույնպես կնքվել են պայմանագրեր: Շահառուների ծնողները տեղեկացված են աշխատանքային ժամանակացույցի մասին: Արդյունքում ունենք իրավական կարգավորում ծառայություն մատուցողի և ծառայություն ստացողի միջև:
- **Ամենօրյա պարապմունքների, խմբակների ու ծառայությունների մատուցում.** Ըստ հաստատված ժամանակացույցի և անհատական զարգացման պլանների՝ շահառուներին հաշվետու ժամանակահատվածում մատուցվել են անհատական և խմբային անհրաժեշտ սոցիալական ծառայություններ: Հաշվետու ժամանակահատվածում ծառայություններ են ստացել 25 շահառու:

Բոլոր մասնագետների կողմից իրականացվել է նաև մասնագիտական կողմնորոշում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր շահառուի կարողությունները, հմտություններն ու հետաքրքրությունները: Գործում է դիզայնի խմբակը, որտեղ երեխաները

- պատրաստում են բացիկներ, դիզայներական տարբեր զարդարանքներ, զարդանախշեր: Բացի այդ գործում է նաև կավագործության խմբակը, որտեղ աշխատում են պոլիմերային կավով, պատրաստում են տարբեր իրեր, զարդեր, դեկորներ: Շահառուներին ամենօրյա ծառայությունների մատուցման ընթացքում տրվում է սննդի փոքրիկ ընդմիջում, ինչը ևս նպաստում է համագործակցությանը, միասին կենցաղավարմանը, ժամանցի անցկացմանը և միմյանց հետ կիսվելուն:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է ժամանցային միջոցառում երեխաների համար. կենտրոնի 12 երեխաներ այցելել են Արմավիրի զբոսայգի, որը վերջերս է վերանորոգվել և կահավորվել գեղեցիկ ու գունեղ խաղահրապարակով: Երեխաներն անցկացրեցին բացօթյա հետաքրքիր խաղերով հագեցած ժամեր, որից հետո այցելեցին սրճարան խաղային տարբեր դաշտերով: Միջոցառումը նպաստեց ինչպես համագործակցությանն ու շփմանը, այնպես էլ հանրային վայրերում ժամանցի անցկացմանը, հասակակից հաշմանդամություն չունեցող երեխաների հետ շփմանն ու ներառմանը: Բացի այդ, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի բարերար ընկերոջ կողմից կենտրոնին տրամադրվել են նոր կոշիկներ, որոնք բաշխվել են կենտրոնի անապահով երեխաներին:

Հաշվետու ժամանակահատվածում, դեկտեմբերի 3-ի հաշմանդամների միջազգային օրվան նվիրված, կենտրոնի և մատուցվող ծառայությունների մասին լուսաբանվել է մարզային հեռուստաընկերությամբ՝ Արմավուրի շրջանակներում: Ներկայացվեց կենտրոնը, ծառայություն ստացող երեխաները, նրանց մատուցվող ծառայությունները, խոսեցին մասնագետներն ու երեխաները: Տեսառեպորտաժը տարածվել է նաև ՀԿ-ի սոցիալական ցանցերով: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է նաև ամանորյա միջոցառում երեխաների համար. ծրագրի 25 շահառու երեխաները մասնագետների հետ միասին զարդարել են տոնածառը, այնուհետև նրանց համար կազմակերպվել է ամանորյա երգ ու պար, մրցույթ՝ իրենց կարողություններին համապատասխան, որից հետո տրվել են փոքրիկ ամանորյա նվերներ: Միջոցառումը նպաստեց ինչպես համագործակցությանն ու շփմանը, միմյանց օգնելու կարողությունների զարգացմանը, այնպես էլ գեղագիտական ճաշակի զարգացմանը, ամանորյա հեքիաթին հավատալուն և դրական լիցքեր ստանալուն:

Ծնողների հետ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ընդհանուր թվով վեց ծնողական հանդիպում սեմինար, յուրաքանչյուր ամիս՝ երկուական, որոնց մասնակցել են ընդհանուր թվով 46 ծնող: Սեմինարների թեմաները որոշվել են ըստ ծնողների կարիքների, ինչպես նաև անհատական գրույցների արդյունքում, երբ ծնողական աջակցման խորհրդատուն բացահայտում է անհրաժեշտ թեմայի կարիքը, որն ունեն ծնողները: Դրանք եղել են տարբեր թեմաներ, ինչպիսիք են՝

- աուտիզմով աուտիզմով երեխաների ուշադրությունը
- հաշմանդամություն ունեցող երեխաների/պատանիների սեռականությունը
- մինչև 5 տարեկան երեխաների զարգացման դժվարությունները
- ընտանիքում հաշմանդամություն ունեցող երեխայի ներառումը կենցաղային գործողություններում ու անցուդարձում
- հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքները
- դեռահասության շրջանի տարիքային առանձնահատկությունները

Իրականացվել է նաև համագործակցային հանդիպում մարզի թվով 3 մանկապարտեզների հետ, յուրաքանչյուր ամիս՝ մեկական: Այս հանդիպումները նպատակ ունեն կարևորել ընդհանուր ներառումը, կիսվել աշխատանքային մեթոդներով, տեղեկանալ ուղղորդման մեխանիզմների մասին, ծնողների հետ աշխատանքում կարևորել խնդիրների հայտնաբերման առաջին քայլերն ու դրանց կարևորությունը հետագա խնդիրներ կանխարգելման գործում: Խոսվել է երեխաների իրավունքների, հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ խտրականության, խնդիրների վաղ հայտնաբերման և համապատասխան մասնագետներին դիմելու կարևորության, ինչպես նաև ուղղորդման մեխանիզմների մասին:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով.

- Յուրաքանչյուր ամիս 25 շահառուի համապատասխան սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում,

- Շահառուների՝ հանրակրթական դպրոցներում և մասնագիտական կրթական այլ հաստատություններում ներառվելու գործընթացին աջակցություն/հանդիպում թվով 3 մանկապարտեզների հետ,
- Շահառուների ծնողներին կամ ընտանիքի անդամներին խորհրդատվության ապահովում/ընդամենը ծնողական 6 հանդիպումների անցկացում, ամսեկան՝ 2-ական:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի աշխատանքների և մատուցվող ծառայությունների մասին պարբերաբար տեղեկատվություն է դրվել ԱԶԿ ՀԿ-ին պատկանող Արևածագ սոցիալական էջում և դրանք հասանելի են հետևյալ հղումներով.

<https://www.facebook.com/Arevatsag/posts/pfbid0jrE6zSXikAgrqB6kAKBhb33DnEPgVUL98qr9sisMV7jGN1CD5PmGiEytnk8oGWPml>

<https://www.facebook.com/Arevatsag/posts/pfbid0tY1hsM85K69XhkV9iRX9FPY2pUX8ZP37W4myBKFGeiEbA7cWKw3QZQJRLr6eyAbcl>

<https://www.facebook.com/Arevatsag/posts/pfbid02Tp6k9GVz8mSYMXPtVAA8saGmdVzldsXrqaNSTKGpnQj1mf8dEo4cNA4Rev9K99Rzl>

<https://www.facebook.com/Arevatsag/posts/pfbid02Ea2QsuT2uk7X6yASphRh3KQoyiV9YA9bfofnvy7Bw7JBtuGuMFTQ5h5nPSS3fi4ql>

<https://www.facebook.com/Arevatsag/posts/pfbid027Q9qA9RFgPD2IEU3y5aL4rNWUEaBZAQZSD9mJT5F11x7uPwC38a9tqljv2crGPzQl>

<https://www.facebook.com/Arevatsag/posts/526277732874582>

<https://www.youtube.com/watch?v=Pc9NEaBQrO4>

<https://www.facebook.com/Arevatsag/posts/521104980058524>

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում էական դժվարություններ չեն առաջացել, որոնք կխոչընդոտեին կենտրոնի արդյունավետ գործարկմանն ու ծառայությունների մատուցմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ներկայացվող հաշվետվությունը այս տարվա վերջին հաշվետվությունն է, ուստի, հաջորդ ժամանակահատվածի համար այս պահին նախատեսված գործողություններ դեռ չկան:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Ծնողական հանդիպում սեմինարները, համագործակցային հանդիպումները նախակրթական հաստատությունների անձնակազմի հետ, ինչպես նաև ֆիզիոթերապիայի ծառայությունները կենտրոնի գործարկման ընթացքում նախատեսված չեն սույն ծրագրի աշխատանքային պլանով և բյուջեով, սակայն դրանք իրականացվում են Ամբոր Հայաստան բարեգործական հիմնադրամի աջակցությամբ՝ առավել ամբողջականացնելով կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունները մարզի շահառուներին:

ԱԶԿ ՀԿ նախագահ՝



Ն. Առաքելյան